02 մայիսի 2024թ.

Թիվ 01/1 -74

Հաշվետվություն 01

Հայաստանի Հանրապետության
Կենտրոնական բանկի նախագահ
Մարտին Գալստյանին

Հարգելի պարոն Գալստյան,

Համաձայն «Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» ՀՀ Կենտրոնական բանկի Կանոնակարգ 4/04 գլուխ 23-ի, կից ներկայացնում ենք էական փաստերի վերաբերյալ տեղեկատվությունը:

Առդիր՝ 1 թերթ

Հարգանքով՝

Գլխավոր գործադիր տնօրեն՝ Հակոբ Անդրեասյան

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ / "ACBA BANK" OJSC
Կենտրոնական գրասենյակ
Head Office

+374 10 31 88 88
acba@acba.am
www.acba.am

ՀՀ, Երևան, 0002, Արամի 82-84
82-84 Aram st., Yerevan, 0002, RA

Էական փաստեր և տեղեկություններ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի գումարման վերաբերյալ:

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետերերի 2024 թվականի տարեկան ընդհանուր ժողովը տեղի կունենա 2024 թվականի մայիսի 14-ին սահմանափակ թվով բաժնետերերի ֆիզիկական ներկայությամբ՝ «ՖՈՒԴՊԱՐԿ ԲԱՅ ԴԱՈՒՆԹԱՈՒՆ» ("FOODPARK BY DOWNTOWN") վայրում, ժամը 15:00-ին: Ֆիզիկապես չներկայացած բաժնետերերը հնարավորություն կունենան մասնակցել տարեկան ընդհանուր ժողովին և քվեարկել հատուկ նախատեսված կապի միջոցներով՝ իրական ժամանակի ռեժիմում:

- *Ընդհանուր ժողովին մասնակցելու և տարեկան շահութաբաժիններ ստանալու իրավունք կունենան ԱԿԲԱ Բանկի բոլոր այն բաժնետերերը, անկախ տնօրինվող բաժնետոմսերի քանակից, ովքեր 2024 թվականի ապրիլի 29-ի ժամը 15:30-ի դրությամբ ընդգրկված են եղել Բանկի բաժնետերերի ռեեստրում: Շահութաբաժինների չափի և վճարման մասին վերջնական որոշումը կընդունվի ընդհանուր ժողովի կողմից, սակայն Բանկի խորհրդի կողմից որոշվել է բաշխել 5,5 մլրդ դրամ ընդհանուր շահույթ: Այս բաշխումը նախատեսում է մեկ բաժնետոմսիդիմաց 1,000 դրամ շահութաբաժնի վճարում, որը նախորդ տարվա համեմատ ընդհանուր բաշխված շահույթից 1,1 մլրդ դրամով, իսկ մեկ բաժնետոմսի դիմաց՝ 200 դրամով ավելին է:*